ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N1680 - Ա **26 մարտի 2009թ.**

ԾԽԱԽՈՏԱԳՈՐԾՆԵՐԻ ՓՈՂՈՑԻ Հ. 117/2 ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՆԱՐԻՆԵ ԼԵՎԻԿԻ ԱՂԵԿՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Նարինե Լևիկի Աղեկյանի (ծնված 17.03.1972թ.) դիմումը: Ըստ քաղաքացու հայտարարության՝ Ծխախոտագործների փողոցի հ.117/2 հասցեում գույքային միավորի նկատմամբ գրանցված իրավունք առկա չէ:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 1954 թվականը, Հայաստանի ազգային արխիվի Երևանի քաղաքային մասնաճյուղի 19.03.2009թ. հ.01-20/531, Երևանի քաղաքապետարանի «Հողի և ունեցվածքի գործառնություններ» ՊՓԲԸ-ի 18.03.2009թ. հ.20/2-Ե/129 գրությունները և Երևանի քաղաքապետարանի «Քաղաքաշինություն» ՊՓԲԸ-ի 09.03.2009թ. հ.20-Ել-1624 եզրակացությունը, համաձայն որի Ծխախոտագործների փողոցի հ.117/2 բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» հ.2387-Ն որոշմամբ.

1. Վերականգնել Ծխախոտագործների փողոցի հ.117/2 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Նարինե Լևիկի Աղեկյանի անհրաժեշտ 247.09քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 247.09քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ:

2. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Մարաշ տարածքային ստորաբաժանման կողմից:

3. Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրված գլխավոր հատակագծով:

4. Ծխախոտագործների փողոցի հ.117 հասցեի բնակելի տանը տրամադրել հասցե՝ «Ծխախոտագործների փողոցի հ.117/2 տուն»:

5. Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Մարաշ տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացի՝ Նարինե Լևիկի Աղեկյանի սեփականության իրավունքն ամրագրված հողամասի և շենք-շինության նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ լուծելով գույքագրման արդյունքում հաշվառված անշարժ գույքի խնդիրները։

6. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության պետին՝ սույն որոշման օրինակները 5-օրյա ժամկետում առաքել Կենտրոն թաղապետարան։

7. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա։

8. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Սարգսյանի վրա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ